

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունուում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԻԸ

յայտնում է 3-րդ կարգի պ.պ. ընտրողների զեռութեանը, որ

1) Նոյեմբերի 18-ի և 25-ի նիստերի շարունակութիւնը նշանակում է նա կիրակի, այս 1890 թվի դեկտեմբերի 2-ին, Թիֆլիսի Ազնականների կալուածական բանկի թատրոնական դահլիճում, առաւօտեան 9 ժամին, 1891—1894 քառամեակի համար 3-րդ կարգի ընտրողներին քուէարկութեամբ Գումայի ձայնաւորներ ընտրելու:

2) Նոյեմբերի 25-ի վերջին նիստում կազմած 185 անձանց ընդհանուր կանգի-դատական ցուցակը, որը ստորագրել են թէ իրանք, թէ ժողովի կողմից ընտրված օգնա-կան վեց անձինք, և թէ երկրորդան նիստը փակելու րօպէին այդ ցուցակը յայտնե-լու ժամանակ ներկայ եղող ընտրողները, կարելի է տեսնել քաղաքային վարչութեան մէջ ամեն օր, 12-ից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ:

3) Ձայնաւոր քուէարկվել չը ցանկացողները կարող են այդ բանի մասին յայտնել քաղաքապետին, մի և նոյն ժամանակ այդ յայտարարութիւնները կը հասցնվեն ընտրող-ների ժողովի զեռութեանը, դեկտեմբերի 2-ի նիստին, Գումայի ձայնաւոր քուէարկվողնե-րի ընդհանուր կանգիդատական ցուցակը կարդալու ժամանակ:

4) Քուէարկութիւնը կը սկսվի առաւօտեան ճիշդ 10 ժամին և մինչև այդ ժամա-նակամինչը կընդունվեն և հաւատարմագրվելները:

5) Նոյեմբերի 25-ի նիստին ներկայ եղողները պէտք է դահլիճը մտնելու ժամա-նակ ներկայացնեն իրանց ստացած և այն նիստին դրոշմած տոմսակները, իսկ նոր ե-կողները կարող են ստանալ նոյնպիսի տոմսակներ ընտրողների ժողովը մտնելու ժամա-նակ:

1—2

ԲՈՎԱՆԳԻՆՈՒԹԻՒՆ

Գիւղացիական համայնարանները Շվեդիայում:
— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Օղէսայից
Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բա-
ղուածներ Կ. Պօլսի լրագրից: Արտաքին լու-
րեր. — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՈՐՍԱ.
— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Համ-
քարական միութիւններ:

ԳԻՒՂԱՑԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԸ ՇՎԵ- ԴԻԱՑՈՒՄ

Երկու միջոց կայ մտաւորապէս և բա-
րոյապէս ներգործելու գիւղական ազգա-
բնակչութեան վրա. առաջինն է՝ դրակը
գիւղական ազգաբնակչութիւնը դէպի այն
ընդհանուր ուսումը, որը վայելում են
ազգի բոլոր դասակարգերը, իսկ երկրորդը՝

մտցնել գիւղական տարրի մէջ այնպիսի
ուսումնարանական սիստեմ, որը ամբողջա-
պէս և անխախտ կերպով պահպանելով իր
երգած դրութեան մէջ գիւղական, երկրա-
գործ տարրը, միայն լոյս է մտցնում այդ
խաւար տարրի մէջ:

Առաջին սիստեմը անջատում է գիւղա-
կան տարրից նրա ամենալաւ ոյժերը, գիւ-
ղացի անհատներին դարձնելով ընդհանուր
ինտելիգենցիային պատկանող անդամներ:
Այդ տեսակ երեւոյթ մենք տեսնում ենք
մեր մէջ. գիւղացի անհատը մտնում է գիւ-
ղական, կամ ծխական դպրոց, ապա զինմա-
զիւ, վերջապէս և համայնարան, դառնում է
փաստաբան, բժիշկ, դատաւոր, խմբագիր,
պրօֆէսոր, արքունի պաշտօնայ, վերջապէս
քաղաքի բնակիչ... Եւ ահա գիւղացի, երկ-
րագործ տարրից կտրվում են նրա ամենա-
լաւ ոյժերը: Անհատները շահվում են
դրանով, բայց գիւղի ոյժը սպառվում է:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՄԱՔԱՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ

Մի համեմատական նկատողութիւն
մեր համբարները և եւրօպացոց միջ-
նադարեան ցէկական միութիւնները
մասին:

4) Դաւադները համբարութիւնն առաջար-
կում էր քարգահին որոշ քանակութեան հում կա-
շի նա պէտք է այդ կաշիները մաշահան անել,
մաքէր և ներկէր, լամին գոյնից—(սև, կարմիր,
կանաչ) մօտաւորապէս 5-ից մինչև 10 հատ: Ե-
թէ քարգահը աշտոնութեամբ էր կատարում իրան
առաջարկած գործը, նրան ընտրում էին վարպետ:
Հակառակ դիպուածում, նա 1 կամ երկու տարի
պէտք է կրկին մնար քարգահ և վարձատրէր վար-
պետին, վճարելով փչացրած կաշիները գինը:

5) Հիւսնները կամ դուղի դարձնել համբա-
րը պահանջում էր քարգահից շինել տան կտուրի
կրակի մօտ: 4 մինչև 16 կարգանի շէնքերով:
կամ եկեղեցու խաչկալ:

6) Գերծակները համբարը պահանջում էր.

1) եւրօպական շոր կտորներից ձևել և կարել
աղուով կամ ուրիշ հագուստ. 2) ասիական դեր-
ձակը պահանջում էր քարգահից ձևել, կարել
և չիգիւնով կամ գիւղաբաժնիով զարդարել կա-
նանց «գոգնոց»: Մանաւանդ ուշադրութիւն էին
դարձնում գոգնոցի շրջանակի գիւղաբաժնիով
կարած զարդարանքի վրա: Կամ թէ քարգահը
պէտք է ձևել և կարէր «խրթն» կամ «շուքա»:

7) Գործարարները համբարը պահանջում
էր քարգահից հինգ և գործել կանանց «էլրամ»
անուանած կտորը:

8) Ղաղազները համբարը մի առանձին աշ-
խատանք ըստ մեծի մասին չէր պահանջում քար-
գահից, այլ բաւականանում էր նրան բերանացի
քննելով թէ ինչպէս է հարկաւոր ոլորել թիւը
(խայթել), ներկել, հինգ և գործել: Պատահում
էր, որ փորձի համար առաջարկում էին նրան
գործել լայն ու նախշած գոտի կամ արքունից
նուրբ դաշխան և այլն:

9) Զինադուրծութեան կամ ՂԼԸ շինու-
թեան վարպետի աստիճան ստանալու համար
քարգահը պէտք է դաշտին շինել և ջրէր:

10) Ղաղազները համբարը վարպետու-
թիւն տալու համար պահանջում էր քարգահից
մի պղնձէ աման լաւ մաքրել և կլէկել:

Փորձնական գործը քննելու նպատակով կամ
նշանակում էին «աստուածախա», «հոգու և
խղճմանքի» տէր հմուտ վարպետներից մի մաս-
նաժողով, կամ թէ քննութիւնը յանձն էին առ-
նում համբարի ուստաբաշին և «աղստախա»:
Համբարական ընդհանուր ժողովի ժամանակ, երբ
բոլոր վարպետները ներկայ էին, քարգահի պատ-
րաստած գործը ներկայվում էր վերաքննութեան,
որպէս զի գերդուռներ տեղի չունենան, կամ ինչ-
պէս իրանք արհեստագործներն են աքում: «Գործը
քննել» Աստուծով և խղճմանքով:

Քարգահը բացի այս պայմաններից, վարպետու-
թիւն ստանալու համար պարտական էր. 1) վճա-
րել մի դուռար յօդուտ համբարական գանձի. դու-
ռարը լինում էր 10 մինչև 20 կամ ամենաշատը
30 ռուբլի: Աղքատներին ըստ հանգամանակ համ-
քարական ժողովը բոլորովին ազատում էր այս
տեսակ տուրքից և կամ քչացնում: Այս տեսակ
տուրք կամ վճարներ ընդունված էր անել հին
Փրանսիական (Aug. Thierry, Recueil des monu-
ments inédits de l'histoire du tiers état, T. II, №
XI, p. 23 (punet, 2) և գերմանական (Otto Gierke

երկրորդ միջոցով, այն է իրագործելով
գիւղական ազգաբնակչութեան համար յա-
տուկ ուսումնարանական սիստեմ, որը
բաղկացած է ստորին, միջին և բարձրա-
դաս ուսումից, անխախտ պահպանվում է
այդ տարրի ամբողջութիւնը, միայն լոյս և
գիտութիւն է տարածվում այդ խաւար
տարրի մէջ:

Այդ տեսակ բարձրագոյն ուսումնարան-
ներ, կամ ինչպէս նրանց անուանում են
«գիւղացիական համալսարաններ», գոյու-
թիւն ունեն Շվեդիայում և Նորվեգիայում:

Այդ տեսակ համալսարաններ ոչինչ դիպ-
ւում և ոչինչ իրաւունքներ չեն տալիս ու-
սում աւարտած գիւղացի ուսանողներին,
այլ միայն մտցնում են նրանց մէջ ընդհա-
նուր զարգացուցիչ բազմակողմանի հմուտ-
ութիւններ:

Այդ համալսարաններում տարեկան դա-
նութեցքը սկսվում է նոյեմբեր ամսի 1-ից և
շարունակվում է մինչև դարունը երբ ըսկա-
վում են դաշտային աշխատանքները: Գիւ-
ղացի ուսանողները ուսման ընթացքի ժա-
մանակ ապրում են համալսարանական շի-
նութեան մէջ: Շվեդիայի կառավարութիւն-
ը, կամ աւելի լաւ է ասել՝ պարլամենտը
պահպանում է իր ծախսով այդ տեսակ հա-
մալսարանները, բացի սրանից իւրաքանչիւր
գիւղացի ուսանողից ստացվում է մի չնչին
տարեկան ուսման վարձ:

Այդ համալսարանները հիմնվել են Շվե-
դիայում 1866 թվին, ուրեմն դեռ ևս նոր
հիմնարկութիւններ են, սակայն այդ կարճ
ժամանակամիջոցում ահազին օգուտ են
տուել երկրի գիւղական ազգաբնակչութեանը
և խոր արմատներ են գցել գիւղական
տարրի մէջ: Գիւղացի երիտասարդների կող-
մից այդ կարճ ժամանակամիջոցում ուս-
մունքների մէջ ցոյց տուած առաջադիմու-
թիւնը՝ աներեւակայելի է:

Ուսանողների միջին հասակը այդ հա-
մալսարաններում՝ 18 տարեկանից սկսած
մինչև 25 տարեկանն է, բայց պատահում

են և աւելի հասակով ուսանողներ: Համա-
լսարանները գտնվում են գիւղերի մէջ և
ներկայացնում են փառաւոր շինութիւն-
ներ: Համալսարանի շինութեան մէջ ապ-
րում է և համալսարանի ընկալօրը, որը
յայտնի ուժին է ստանում և որը կառավա-
րում է այդ գիւղացիական բարձրագոյն
դպրոցը, ինքն իր նախաձեռնութեամբ
հրաւիրելով ուսուցիչներին, որոնք կազմ-
ված պրօֆեսոր համեմատ աւանդում են
ուսանողներին ընդհանուր զարգացուցիչ
առարկաներ: Համալսարանը նպատակ ունի
ընդհանրապէս զարգացնել գիւղացի երե-
րտասարդների մտաւոր կարողութիւնը և
խուսափում է նրանց որ և է մասնագիտու-
թիւն կամ արհեստ սովորեցնելուց: Մեծ
ուշադրութիւն է դարձնում այդ համա-
լսարաններում ուսանողների ֆիզիկական
զարգացման վրա էր: Բացի սրանից նրանց
սովորեցնում են երաժշտութիւն և մա-
նաւանդ խօրական կանոնաւոր երգեցողու-
թիւն:

Ստոկհոլմի համալսարանի մաթեմատիկա-
յի պրօֆէսոր, ռուս կին Սօֆիա Կօփայել-
սկայա «Сѣверный Вѣстникъ» ամսա-
գրում իր տպւած յօդուածում՝ յայտնում
է իր հիացմունքը Շվեդիայի այդ գիւղա-
ցիական համալսարանների մասին: Գիտաւոր
է երեւակայել անգամաւսում է նա, թէ մի ու-
սումնարանական տարվայ ընթացքում հմուտ-
ութիւնների որքա՞ն առատ պաշար են ըն-
դունում ու իրացնում երիտասարդ գիւ-
ղացիները Շվեդիայի գիւղացիական այդ
բարձրագոյն դպրոցներում:

Սկզբունքը, մեր կարծիքով, շատ ուղիղ է.
չը պէտք է անջատել գիւղացուն իր երկ-
րագործական միջոցաւորից, իր հողից, չը
պէտք է մէկ մէկ դուրս բաշել այդ տարրից
անհատներ և շարունակ նրանց իրանց համար
օտար, ընդհանուր քաղաքային ինտելիգեն-
ցիայի միջոցաւորի մէջ, — այլ պէտք է ջանալ
պահպանել երկրագործ ազգաբնակչութիւնը
իր ամբողջութեան մէջ, միայն մտցնել այդ

մեծ յարգելի «եղբայր» վարպետները, իսկ յետոյ
աւելի փոքրները: Եթէ փորձական աշխատա-
նող ժողովը բաւական է, օրհնութիւնը տեղի էր
ունենում անմիջապէս, հակառակ դիպուածում
նշանակում էին նոր աշխատանք և օրհնութիւնը
յետաձգվում էր: Օրհնութիւնը կատարում էր ա-
մենամեծ և հասակով ուստաբաշին կամ Շվեդ-
սահաբնա Նա մի կարճ ճառով բացատրում էր
քարգահին արհեստի նշանակութիւնը, խորհուրդ
էր տալիս լինել «աղին» և «բարեխաղ» թէ
«եղբայր» վարպետները և նրանց ընտանիքի վե-
րաբերութեամբ, թէ հասարակութեան, որպէս զի
համբարի բարի անունը չը կտորվի ժողովրդի աչ-
քում: «Խորհուրդները, խորհուրդները, բարեխաղից,
պոռնիկութիւնից և ուրիշ չարիք-
ներից քնդ աղատ պահել, որդեակի», ասում էր
օրհնանք կատարող վարպետը: Օրհնութիւնը վեր-
ջանում էր տէրուական աղօթքով՝ «Հայր մեր»-
ով: Օրհնութեան աղօթքի ժամանակ բոլոր ժողո-
վականները կանգնած էին լուռ, իսկ քարգահը
և նրա ուսուցիչը չըբած և ջերմանալով խաղա-
ղութեանը կարծած: Օրհնանքից յետոյ, վարպետ-
ները կարգով մօտենում են և նորմալիւր «եղբո-
րը» շնորհաւորում: Չը պէտք է մոռանալ, որ
օրհնութիւնից առաջ ամբողջ համբարութեան վար-
պետները ժողովում են ամենաձեռք տեղեկու-
թիւններ քարգահի վարք ու բարքի վերաբերու-
թեամբ: Եթէ նրա վարքը վատ էր, եթէ նկատ-
ված էր գողութեան, արքեցողութեան, պոռնիկու-
թեան, անվայել վարմունքի մէջ կանանց և մա-
նաւանդ համբարի անդամների ընտանեաց դէմ, և
առհասարակ մի անվայել և համբարի անունը
կտորող գործի մէջ, — նրան չէին ձեռնադրել, թէ-
կուղ նա իր արհեստի մէջ ցոյց տար վերին աս-
տիճանի հմուտութիւն և գիտութիւն:

Օրհնանքից յետոյ առաջինից կիրակին կամ

խաւար տարրի մէջ այն ընդհանուր լոյսը, որը մատչելի էր մինչև այժմ հասարակութեան միմիայն բարձր, կամ քաղաքային դասակարգերին և գիւղական ազգաբնակչութիւնից զուրս եկած այն մի քանի անհատներին, որոնք իրանց շրջանի մի տեսակ բէն և գատնէր հանգիստանալով դաւանանում էին իրանց շրջանին, անտես առնելով և անկնամ թողնելով իրանց գիւղական տարրը: Այդպիսով ազգի ընդհանուր ինտելիգենցիան շատ էլ չէր շահուած կրթութեամբ գիւղացիների ներկայութիւնից, իսկ գիւղական տարրը սպառնում էր, կորցնելով իր միջին ամենալաւ յոյժերը:

Պէտք է անելագնանք, որ Շվեդիայում բացի արական սեռին պատկանող գիւղացիների համար հիմնական համալսարաններից, կան մի քանի գիւղացիական համալսարաններ և նոյն դասակարգին պատկանող իգական սեռի համար:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱԿ ԵՐԵՄԻԱՅ

Նոյեմբերի 10-ին

Մօսկվայի համալսարանի պրոֆէսոր Կորչ, որը փոխադրվել է Օրէսայի համալսարանը, նոյեմբերի 2-ին կարգաց համալսարանի լսարանում, ընկնողի մի քանի պրոֆէսորների և ուսանողների ստուար մեծամասնութեան ներկայութեամբ, իր առաջին դասախոսութիւնը:

Դասախոսութեան նիւթն էր՝ «Ինչ կարող է և ինչ պէտք է անէ Օրէսայի դիտութեան համար»: Դասախոսութեան սկիզբում յարգելի պրոֆէսորը յաջողութեամբ կերպով արտայայտեց այն տպաւորութիւնը, որ թողել էր իր վրա Օրէսայի 90 թուականի ապրիլի վերջում: «Եթէ այդ քաղաքը, ասեց նա, վաղուց ի վեր շարժել էր իմ հետաքրքրութիւնը, համարեա այն օրից, երբ ես՝ դեռ երեխայ, կարգադրեալ նրա նկարագրութիւնը Պուշկինի «Եվգենի Օնեգին»-ի գլուխներից մէկի մէջ, դեռ շատ վաղուց հրապարակում էր ինձ այդ տարօրինակ, կիսա-հերոսական, մի և նոյն ժամանակ արեւելեան տարրի հետ խառն, բայց ուսական քաղաքը»:

Պրոֆէսորը գլխաւորապէս կանգ առաւ Օրէսայի արդի դրութեան վրա: «Ես այս քաղաքում մնացի մի քանի ժամանակ, որպէս զի ծանօթանաւ նրա հետ լեզուաբանական և էթնոգրաֆիական տեսակետներից, բայց նախախնամութիւնը այնպէս կարգադրեց, որ ես Մօսկվայի համալսարանի

պրոֆէսորից՝ դարձայ պրոֆէսոր Օրէսայի համալսարանի»:

Մրանից յետոյ դասախօսը, համեմատելով առաջվայ Օրէսայի այժմանի հետ, դատաւ, որ նա թէ գիւղացիութեան, թէ մատուր զարգացման կողմից հակադաս քայլերով է առաջ ընթանում: Նա ասեց, որ Օրէսայ բացառիկ հանգամանքների մէջ է. նա ներկայացնում է մեղ մի միջազգային բաբելոն, ուր գտնվում են ամեն տեսակ ազգութիւններ, որոնց ուսումնասիրելը մեծ ուշադրութեան է արժանի: Յարգելի ուսուցչապետը մատնանի արեց հանդուգնաւ բարձր Ուսարի վրա, որը լոյս է ընծայել մի քանի քերականութիւններ զանազան բարբառների՝ աբխազների, չեչենների և ավարների, նմանապէս Մօսկվայի համալսարանի պրոֆէսոր Միլերի վրա, որն ունի արդէն լոյս ընծայած, որոշ սխառնութիւններ, օտերի քերականութիւնը:

Այս անցնելով կովկասի ազգաբնակչութիւններին, դասախօսը յայտնեց հետեւեալ միտքը: «Կովկասի երկու ազգութիւնները՝ հայոց և վրաց զբաղեցնող լեզուների ուսումնասիրելը թողնում է արեւելեան գիտականների և մինչև այժմ ուսուցիչներ լեզուով չունենք փորը ի շատէ օրինաւոր մի ձեւարկ այդ լեզուների, մինչդեռ վերջինները ունեն անաղին նշանակութիւն: Այս խօսքերով ես չեմ արդարացնում մերձից, ոչ էլ միջազգային հայերին և վրացիներին, բայց ինչ է իցէ, միթէ չէ թող տրվում մեզ գոնէ յուսալ, որ այս համալսարանում պարագլուխ երկուստեք հայեր և վրացիները գիտութեանը օգնութիւն կը հասցնեն և կը տան մեզ իրանց մայրենի լեզուի քերականութիւնները և կամ գէթ մասնաւոր հետազոտութիւններով կաշխատեն իրագործել այդ նպատակը»:

Վերջացնելով դասախօսութիւնը, ուսուցչապետն ասեց, «Ի հարկէ, պարոններ, ստիպել ձեզ պարագլուխ արեւելեան լեզուներով, որ նոյնն է թէ ստիպել ձեզ պարագլուխ ձեզ համար օտար առարկաներով»—ես չունեմ իրաւունք: Այս ամենը ես ասեցի, կամենալով ցոյց տալ ձեզ, թէ ինչ մեծ դեր պիտի խաղայ Օրէսայի համալսարանի լեզուաբանական բաժինը. իսկ մենք, մինչ այն ժամանակ, երբ Օրէսայի համալսարանը այն աստիճան կը զարգանայ, որ կը կարողանայ ազատ կերպով տարածել իր լայն թիւերը իր միջազգային կոչմանը համաձայն,—մենք համեստ կերպով, բայց ժրջանութեամբ կաշխատենք առաջ գնալ մեր մասնագիտութեան մէջ, քաջ գիտեմաւոր, որ ամեն ինչ և ջանք ներկայումս՝ ապագայի առաջադիմութեան գրաւական է: Բուռն ծախսահարութիւնները հետեւեցին պրոֆէսորին մինչև լսարանից դուրս գալը:

Կտում է արդեւել այս սովորութիւնը՝ նախ քան քարգահին վարպետ ընտրելը, նրան ստիպում էին դառնալ ծաղրածութեան առարկայ. նրան հաղցնում էին մի տեսակ արեւելեան շորեր, զուլսը դնում էին սովորականից զուրս գտակ և նա թափառելով քաղաքի փողոցները՝ պէտք է ենթարկվէր զանազան սրբախօսութիւնների և ծաղրածութեան: Ֆրանսիացի (M. C. G. Simon, étude historique et morale sur le compagnonage (edit. 1853), թ. 82.) խառն քաղաքում, մինչև անգամ 40-ական թուականներում վարպետները ընդհանուր ժողովը, քարգահին ընտրելուց առաջ, նրան դարձնում էր ծաղրածութեան և սրբախօսութեան առարկայ:

Քարգահը ստիպված էր ամենայն հնազանդութեամբ տանել վարպետների բոլոր սրբախօսութիւնները: Երբեմն այդ տեսակ սրբախօսութիւնները վնաս էին անմուղ, երբեմն դառնում էին մի տեսակ չարարանք:

Գ. Հ. ա մ բ ր ա կ ա ն ի ժ ա ո ա ն դ ն ե ռ ի մ ու ք ք. Մինչև այժմ մենք խօսում էինք ընդունութեան ընդհանուր կանոնի մասին: Կային որոշ անձինք, որոնց օգտին համբարական սովորութիւնները մշակել էին բացառիկ ընդունելութեան եղանակ: Խօսքներս համբարականների որոշ մասին է: Համբարականի տղան, ինչպէս մեղանում (գոնէ Ախալցխայում) այնպէս և միջնադարեան Եւրոպայում ունէր այն արտօնութիւնը, որ աշակերտութիւնից և քարգահութիւնից ազատ էր համարվում: Ախալցխայի արհեստագործները այս սովորութիւնը արտայայտում են հետեւեալ տառերով՝ Փոքրուկ, ռուսա օղլի, ուստաֆա, այսինքն վարպետի տղան, վարպետ է: Այս կանոնը, հարկաւ, զորութիւն ունէր միայն իրանց հօր արհեստով պարագլուխ օրոյց համար: Միւսներն այդ արտօնութիւնը չունէին, եթէ արհես-

տէ կարելի չը համաձայնվէր յարգելի ուսուցչապետի այն կարծիքի հետ, որ հայոց և վրաց զբաղեցնող լեզուները ուսումնասիրելու մէջ տեղիս հայ և վրացի ուսանողները կարող էին օգնութիւն հասցնել. սակայն ցաւելով պէտք է յայտնել, որ պրոֆէսորի այդ գեղեցիկ ցանկութիւնը կը մնայ միմիայն ցանկութիւն: Մեզ հրաւիրում են մայրենի լեզուից տեղեկութիւններ տալ գիտնականներին, մինչդեռ մեզանից շատ շատերը քերականութեան կողքիցն էլ չեն անցկացել: Շատ կարելի է որ պրոֆէսոր Վորչ հայոց քերականութիւնը հայ ուսանողներից շատ գիտենայ. իսկ հայոց պատմութիւնը նա անշուշտ կարողացած կը լինի մեր պատմութեան վերաբերեալ ռուսերէն լեզուով գուրս եկած զանազան գրքերում, այն ինչ ուսանողներից շատերը ոչ ռուսերէն են կարողացել, ոչ էլ, ի հարկէ, հայերէն, որը նրանց համար չինական լեզու է դարձել:

Այս պէտք է խոստովանվել, որ մայրենի լեզուի պատմութեան և աշխարհագրութեան ուսումնասիրելու մէջ առհասարակ ուսանողները շատ բութիկ են: Այդ խոսքը պատմութեան վրա ուշք դարձնելը անհրաժեշտ է:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Տեղական լրագրիւնները հաղորդում են, որ հոկտեմբեր և նոյեմբեր ամիսները ընթացքում Գուրիսի նահանգի մի քանի տեղերում եղել են անստաւային սաստիկ հրդեհներ: Այդ հրդեհները, որոնք այժմ հանդիման են արդէն, բաւական մեծ վնասներ պատճառեցին թէ արքունի դանձարանին և թէ անտառատեղերին:

ՇՈՒԱՎԵՐԻՑ մեզ գրում են, որ այդտեղի օրերից քաղաքը կը կրկն քայլեր, միայն շատ թույլ է ընթանում: Արական ուսումնասիրան չի նուրթնում էլ կիսատ մնացած՝ փշանում ու քանդվում է: Պ. Պառաւեանց մտադիր է շինութիւնը վերջացնել իր հաշուով, ծախսելով դրա վրա ոչ պակաս քան 2000 ռուբլի, միայն այն պայմանով, որ ուսումնասիրան իր անունով կոչվի: Մինչև անգամ նոյն պարոնը պատրաստ է և օրերից քաղաքի համար էլ իր հաշուով շինութիւն կառուցանել, այն պայմանով, որ այդ իգական դպրոցն էլ իր կնոջ անունով կոչվի:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ մեզ գրում են, որ պ. Ս. Տէր-Մարտիրոսեանց բացել է այդ քաղաքում լրագրական մի գործակալութիւն, որտեղ ընդունում է

բոլոր հայ և ուսու պարբերական հրատարակութիւնների համար բաժանորդագրութիւն:

Վաղը, ուրախ օր, նոյեմբերի 30-ին, իտալացի երգչուհի օրիորդ Գրեթիսի կօնցերտ կը տայ Թիֆլիսի Ժողովարանի դահլիճում: Սկիզբը ժամին երկուցեան: Տոմարները վաղօրեք կը բերել է ստանալ «Տարազ» գրասենական լանկօի երաժշտական մագաղանում, իսկ կօնցի օրը ժողովարանում:

«Հրատարակական ընկերութիւնը» իր շնորհիւ մի անգամ ցոյց տուեց, հրատարակելով հայոց պատմական արվիլի փոշիների տակ թողնելով մի գրքի, որը վերագրելու հետեւան է «Յովհաննու Գարգիլի ժամանակագրութիւն հայոց»: 204 երեսից բաղկացած, Պետերբուրգում հրատարակած, այդ գրքիկ տպագրութիւնը ինչ կասկած որ ընկերութեանը շատ հարկւր բուրիւնը է նստել, բայց թէ արդեօք այդ գիրքը ոչ թէ հարկւր, այլ գէթ տասն մարդ պիտի կարդայ ինչ ոչ,—այդ մասին ընկերութեան ղեկավարները մանաւանդ, որոնք վճռով և այդ գիրքը տպագրված է, ի հարկէ, չեն էլ մտածել: Առանց ասելու էլ, շատերն, անկասկած և ենթադրում են, որ այդ գրքին,—ինչպէս և Պետերբուրգում տպագրվող այդ տեսակ ուրիշ գրքերին,—պէտք է պ. Եղիշի առաջարկը՝ բաղկացած ամբողջ երեսից, որը մէջ պատմաբանը իրան հանդէս է բերում իրեն «նուստ գրոց պատմութեանը»:

Թիֆլիսի «Հրատարակական ընկերութիւնը» այս օրերս դիմել է ընկերութեան նախորդ տարվայ անդամներին հետեւեալ հրաւրով: «Վարչութիւնս պատրի ունի խնդրել ձեզ բարեհաճել այս տարի ևս նորոգել ձեր անդամակցութիւնը ընկերութեանս»: Մենք հաւատարմութեամբ կը լսենք ձեր փառաբանական նախադիմումը, որը ստորագրել է այդ հրաւերներին, մեծ տառով մուծել մէջ էր ստորագրելիս, որովհետեւ դրա կը լինէր, որ ոչ մի հրաւեր և խնդրեք չէ կարող չգրաւել զէպի այն ընկերութիւնը, որից անշուշտ շարժութեան հոտ է փչում: Ընկերութեան հասանալիս գրաւելու միջոցը ոչ թէ խնդրեք հրաւիրագրերն են, այլ գործ, գործ և գործ: Սուսացել է արդեօք այդ ընկերութիւնը, որ որ տարի ոչ մի գիրք անգամ չէ հրատարակել (պատրի տպագրված երկու գրքերը անց են ալ տարին խնդրագրված եղել) և հասկանում է որ դեօք այդ նոյն ընկերութիւնը, թէ ինչ կը նշանակէ մի ամբողջ տարի քնել: Եւ միամիտ

նա՞ծ արտօնութիւնների սկզբնապատճառը հետեւեալ է ինքն ըստ իրեան: Եթէ որեւոր կողմից նշին հայրական արհեստից օգուտ քաղելու իրաւունքը, նրանք զրկվին ապրուստի միջոցից, ժամանակ համբարական միութիւնը ստիպված է լինել նրանց օգնել իրան դանձից: Այս ծախսերից ազատվելու նպատակով, արհեստագործ անդամները ստեղծել են որոշեալ արտօնութիւններ, որ օգուտւտ էին համ համբարութիւն համ էլ վարպետին և նրա ժառանգներին: Վերջում, Մարտիրոսի կարծիքով, ունեցաւ որ հետեւեալը, որ միջնադարեան ցեխական թուրքական կանոնադրութիւններով արհեստը ստացած «ժառանգական» կերպարանք և բնաւորութիւն: Այդ սկզբունքը ընդունելուց յետոյ, ամեն վարպետ կարող էր իր արհեստի իրաւունքը ծախել իր կամքին և ցանկութեան համաձայն: Միւս վտանգաւոր հետեւանքն այն էր, որ արհեստագործ միութիւնները ստացան «փակված» կառուական կազմակերպութիւն: Հին վարպետները և հարուստ արհեստագործները կենտրոնացրին իրանք ձեռքում արհեստների զանազան ճիւղերը, ստեղծեցին իրանց համար մի տեսակ միասնականութիւն: Իրանց իրաւունքը կտակում էին իրանց ժառանգներին: Շատ անգամ այդ վերջինները չունէին ոչ հմտութիւն, ոչ գիտութիւն: Արհեստը այդ օրից սկսեց կամաց կամաց ընկնել և վերջապէս հասաւ անշուշտ դրութեան: Շատ ընտանեկան մարդիկ ամբողջ տարիներ ստիպված էին քաղաք հոկտեմբեր ամիսը արգելք ստեղծում էին նրանց վարպետութեան իրաւունքից զրկելու: Առանց մրցութեան արհեստը չէր կարող ծաղկել:

(Կը շարունակվի)

— դա ամբողջապես կազմվել է այն գրքերից, որ
ես հետզհետե վերցնում եմ իմ ծանօթներիցս և
երբեք նրանց չէի վերադարձնում...

Մի տիկին դիմելով իր ջանքի խոնարարունուն.
— Ձեր անկարգ վարմունքը արդեն չափ ու
սահման չունի. դուք չէք բաժանում ձեր մի հատ
սիրելիանուն, այլ ամեն օր ձեր խոնարարունում մի
նոր սուղատե ևմ տեսնում կերակուր ուտելիս...
— Ինչ արած, արհամարհական ժպիտով պա-
տարանում է խոնարարունին, ձեր տան մէջ
այնքան քիչ է ծախսվում ուտելիքի վրա, որ մի
և նոյն սիրելիանը երբեք չէ կարող երկար ժամա-
նակ դիմանալ մեզ մօտ...

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏՐԵՐՈՒԳ, 27 նոյեմբերի: Թաղաւոր Կայսրը և
Թագուհին Կայսրուհին այցելեցին պրինց Օլեքսանդր-
գեանի շինած բժշկական խնամատարը և ներկայ
եղան հիւանդին Կոստի միջոցով պատուստ ա-
նելիս:— Երկի ձմեռային պալատի դահլիճներում
գործանքից կար, որից յետոյ առաւօտեան ճաշ
արվեց բոլոր զինուորայիններին, որոնք ունէին քաջու-
թեան համար ստացած զինուորական նշաններ.
Իսկ երեկոյան Բարձրագոյն ճաշ կար Գեորգեան
չքանչառակներին համար:— «Правит. Вѣстникъ»
լրագրին գրում են Բերլինից, որ պրոֆէսոր Ֆրեն-
ցել մի հիւթ է գտել, որը պահպանում է կենդա-
նուն դիֆտերիայից, իսկ Կոստի աստիճանները
Բերլինը և Կիտասաոս քննեցին դիֆտերիայի և ըն-
դարմացութեան ակտը, և գտան այն հնարը, ո-
րով կարելի է բժշկել այդ հիւանդութեամբ վա-
րակվածներին:— Պետերբուրգ են հաւաքվել Չի-
նաստանի համարեա բոլոր ուսաց հիւպատոսնե-
րը մասնակցելու այն խորհրդին, որը վերաբե-
րում է Ռուսաստանի և Չինաստանի առևտրական
յարաբերութիւնները զարգացնելու հարցին:
ՊԵՏՐԵՐՈՒԳ, 28 նոյեմբերի: «Правит. Вѣст-
никъ» լրագրին գրում են Բերլինից, որ պրոֆէ-
սոր Բերգման կարգաց ուսանելի լեղուով ուսաց
բժիշկներին համար մի դասախօսութիւն Կոստի

բժշկական մեթոդի մասին:— Յայտարարված է, որ
մինչև 800 կառուածներ այլ և այլ նախագիծերով
աճուրդով են ծախվում աղւաական բանկին
պարտքերի տոկոսները չը հատուցանելու պատ-
ճառով:

ԲԵՐԼԻՆ, 28 նոյեմբերի: Պետական կանցլերը
յայտնեց պարլամենտում, որ զօրքի վրա ծախ-
սերն աւելացնելու լուրը ճիշդ չէ:

Ս. ՊԵՏՐԵՐՈՒԳԻ ԲՈՐՍԱ
Նոյեմբերի 27-ին

Լճորդին վրա 10 ֆունտ արծէ.	85	40	4
Բերլինի վրա 100 մարկ	41	85	
Փարիզի վրա 100 ֆրանկ	33	85	
Ոսկի	արծէ.	6	90
Մարտային կուպոններ	138	25	
Արծաթ	1	10	
Բորսային դիվիդենդներ	4	43/4	0/0
Պետ. բանկի 5% տոմս 1-ին շրջանի.	103	75	
— — — 2-րդ	103	50	
— — — 3-րդ	103	25	
— — — 4-րդ	103	25	
— — — 5-րդ	103	50	
— — — 6-րդ	103	25	
6% ոսկեայ բէնտա	146	62	
4% ոսկեայ փոխառութիւն	133	75	
Արեւելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	104	50	
— — — 2-րդ	105	25	
— — — 3-րդ	107	—	
Ներքին 5% առաջին փոխառութ.	236	—	
— — — երկրորդ	217	50	
Պետական. երկաթուղային բէնտա	104	—	
5 1/2% բէնտա	105	50	
4% ներքին փոխառութիւն	91	50	
5% գրաւ. թղթ. աղւ. կալ. բանկի	103	—	
5 1/2% վկայական. գիւղ. հող. բանկի.	105	50	
4 1/2% գրաւական թղթի կալուած.	—	—	
— — — Կրեդիտ. ընկեր. մետաղ.	138	—	
— — — թղթադ.	101	—	
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ.	—	—	
ընկերութեան օրկիցայիններ.	99	50	
Մոսկվայի քաղաք. օրկիցայիններ.	98	—	
Օդեսայի	98	87	
Թիֆլիսի	—	—	
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	—	—	
— — — Գոթիցային	—	—	

Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը
թղթ է:

Խմբագիր-հրատարակող՝ ԳԻՒԳՈՒ ԱՐԾՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆՅԻ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ԳԻՆԷ Է 35 ԿՈՊԵԿ
Ճանապարհաճախով 45 կոպէկ:
Գիմը Կենտրոնական գրադառնաւորին,
կամ հեղինակին—Тифлисъ, Нораменская
ул., домъ бывш. Путинова. 3—3

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ
Ժողովրդական ընթերցանութեան համար
ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ՏԻԿԵՆ
Գինն է 5 կոպէկ:

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ
ԱԶՕ—ՄԱՐՈՒՆ
Գինը 3 կոպէկ:
3—3

Պետերբուրգ ուղևորվելով, ես մնալու եմ Թիֆլիսում մի շաբաթվայ չափ և ան-
ձամբ ցոյց կը տամ ու կը բացատրեմ հասարակութեանը թէ ինչ ձևով պէտք է վառել
իմ հնարած ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԸ ծխողների համար, որը ամենեւին չէ
ենթարկվում եղանակի փոփոխութեան:
Այդ գործիքը առաջին անգամն է վաճառվում Ռուսաստանում: Իւրաքանչիւր գոր-
ծիքը կրում է Պետերբուրգի քաղաքապետի գրաւոր թղթաւութիւնը:
Գործիքը ծախվելու է ամեն օր, բացի կիրակի օրերից, առաւօտեան 9 ժամից մինչև
ժամ կեսօրից յետոյ և 4 ժամից մինչև 7 ժամ՝ երեկոյեան, Յէյուլիին մագաղկնում,
Պալատի առջև:
Վաճառականներին համար զեջում կը լինի: Կենում եմ «Սեվերնիէ Նոմադ» հիւ-
րանոցում:
Ամերիկական քաղաքացի ինժեներ Լ. Կ.

ԿԵՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎ ԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

ՊՐՕՅ. ԳՐ. ԽԱՄԹԵԱՆԻ ՔՆՆԱԳԱՆՈՒԹԻՒՆԸ, ՄՈՒԼԵ խորհրդանշու. ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ
Խորհն Տ. Վ. Ստեփանէի թարգմանութեամբ. գինն է 25 կոպէկ, ճանապարհաճախով
30 կոպէկ: 3—3

ՊՐՕՎԻԶՈՐ Ա. ՇՏԵԻՆԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ
ԱՏԱՄՆԵՐԻ ՑԱԻԻ ԵՒ ՓԶԱՆԱԼՈՒ ԴԷՄ
ՊՐՕԼԵԱՆ ԱՏԱՄՆԱԳԵՂ ԿԱԹԻՆԵՐ 50 ԿՈՊ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՎԱՅԻՆԵԱՆ ԱՏԱՄՆԱՅԻՆ ԷԼԻԿՍԻՐ 80 ԿՈՊ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՏԱՄՆԱՅԻՆ ՓՈՇԻ 30 ԿՈՊ.

ԳԼԽԱՌՈՐ ՊԱՀԵՍ.

ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ Կեղադրական
ապրանքների Կովկասեան ըն-
կերութեան մէջ և պ. պ. Շահ-
պարանանցի, Մակկէրի, Սէնչի-
կովսկու և Ազմուրովի գեղա-
աներում:

УБНЫЯ КАПЛИ: КОР. 50 К.
УБНОЙ ПОРОШОК: КОР. 30 К.
УБНОЙ ЭЛИКСИРЪ: ФЛ. 80 К.
38—52 (Հ.)

Գլխաւոր պա-
հարը գտն-
վում է Թիֆլի-
զում և Բադ-
ւում Բարձրա-
գոյն հաստա-
ված զինուորային և քաղաքային փողոցի անկիւն, տուն Ջանշինովի:
1—5

Մ. Գ. ՅԵՅՏԼԻՆԻ
ԺԱՄԱՅՈՑՆԵՐԻ ՄԱԳԱՋԻՆԻ
ՕՊՏԻԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆԻԲԸ
Պալատի այգու դիմաց, անկիւնի մագաղկնում, ստացված է մեծ ընտրութիւն՝ ոսկեայ, նոսկեայ, նիկեայ, պողպատեայ և կրկայի ոսկորից ԱԿՆՈՑՆԵՐ, ՊԵՆՆԵՆԵՐ և ԼՈՐԵՆՏԵՆԻ Թատրոնական և դաշտային ԲԻՆՕ-
ԿԼԵՐ, ՋԵՐՄԱՆԱՓԵՐ, թէ անեաների, թէ դուրը կախելու և
թէ վանաների համար վերապատեցված և վկայական ունեցող
ՄԱԿԱՍԻՍԿԻ ջերմաչափեր: Լօրէնտի և պէնսէի համար ոսկեայ,
արծաթեայ, նոր-ոսկեայ շղթաներ, նմանապէս մետաքսեայ և մե-
տաղական թելեր:
Ալիսցներ և պէնսէներ արվում են նմանապէս բժշկների
պատուէրով:
Մագաղկնում յանձն են առնում նմանապէս փչացած իրերի
նորոգելը և ապագիների դնելը:
ԳՆԵՐԸ ամենաշափաւոր են:
42—50 (Հ.)

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԽԱՍԱՐԻԱՆԻ
(Կուկիա, վարոցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամէն օր, բացի կիրակի օրերից:
ԱՌԱՌՈՑՆԵՐԸ
ՆԱԽԱՍԱՐԻԱՆ—9—11 ժ. վերաբուժութեան (և աստամեղացաւ) սիֆիլիսի և աչքացաւի:
ՐՈՒԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԽՍԱՀԱԿԵԱՆՑ—11 1/2—12 ժ. կանանց և երեխայոց ց.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՄՈՒԽԱՐԻՆՍԿԻ—12—12 1/2 ժ., կանանց և ներքին ց.
ՊՐՕՏԱՆԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի և շրթի ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12 1/2—1 ժ. ներքին և երեխայոց ց.
ԵՐԵԿՈՆԵՐԸ
ԳԱՂՈՄՍԿԻ—5—6 1/2 ժ. կաշուի ցաւերի, սիֆիլիսի և վերաբուժութեան.
ՓՈՒԿԻՆԵԱՆ—5—6 ժ. ներքին, երեխայոց և ջղային ց. (էլեկտրոտերապիա):
ՆԱԽԱՍԱՐԻԱՆ—6—7 ժ.
Վճար—50 Կ. Համալսողները (կոնսիլիումի) համար առանձին:
Հերթակալ բժիշկ—Երեկ. ժ. 9-ից մինչև առ. ժ. 7-ը:
Հիւանդանոցի վերառեաւ բժշկապետ ՆԱԽԱՍԱՐԻԱՆ

ԾԻԱԽՈՏԻ ԷԿՍՏՐԱԿՏ
ՆԻԿՈԼԱՅ ԲՈՂԴԱՆՍՈՎԻ ԵՒ ԸՆԿ.
ԱՄԵՆԱԼԱԻ ԵՒ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՄԻՋՈՑ ռէտարներն, եղջիւրաւոր և այլ կենդանի-
րն բորոտութիւնից և կաշու ուրիշ ամեն տեսակ հիւանդութիւններից բժշկելու, նմա-
նապէս ձիերին, շներին կաշու ամեն տեսակ հիւանդութիւններից և թռչուններին
պարադիսներից բժշկելու համար:
ՊԱՀՊԱՆՈՒՄ է ամեն տեսակ ծաղիկներ, բոյսեր, ծառեր և բանջարեղէններ՝ որդն-
րից, թրթուրներից և ուրիշ միջատներից:
ԳԼԽԱՌՈՐ ՊԱՀԵՍ ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ Կեղադրական Ապրանքների Վաճառման ԲԱՐՁՐ-
ԴՈՑՆ հաստատված Կովկասեան ընկերութեան մէջ:
21—25 (Հ.)

Օգոստոսի 7-ից 1890 թ. բացվում է երաժշտա-
կան գործիքների և նստաների կովկասեան կեն-
րոնական դէպօ:
Ե. Բ. ԳԻՏԵՐԻՍԻ
առաջին ս. պետերբուրգեան դաշնամուրային գործարանի
ՐՕԵԱԼՆԵՐ ԵՒ ՊԻԱՆՆՈՒՆԵՐ
Մ. Շերէզերի, Բէկկէրի, Սմիդաի, Միլլաւի,
Գէտցի, յայտնի արտասահմանեան գործարանների՝ Շերմայերի, Բլիտաների, Բէխտէյնի
Կալաւաի արմենապիւնո: Շերմայերի Հարմոնիումներ: ԾԱՌՎՈՒՄ է ԵՒ ՎԱՐՁՈՎ. ՏՐՎՈՒՄ
ԹԻՖԼԻՍ. Կաթոցովայա փողոց, Թիֆլիսի աղւաականների կառուածական բանկի տան մէջ
12—16